ԳԼՈՒԽ ԼԱ.

Լեւոն Ե։ Վանօրայք լեռնակոյսն։ Հանրագիր վասն Գաղթութեան։ Հրամարակք։ Մարտիրոս եպիսկոպոս։ Սարգիս եպիսկոպոս։ Մեսրոպ եպիսկոպոս։ Գոզոս եպիսկոպոս։ Սուլթան Գուրխ Պէյ։

ՎԵՐՋԻՆ տարաբաղդ թագաւորն Հայոց Կիլիկիոյ Լեւոն Ե. Լուսինեան, յետ աղատութեան իւրոյ 'ի գերութենէ և 'ի բանտէն Գահիրէի, եկն յԵրուսաղէմ ընդ Մարիամ թագուհւոյ և դստեր իւրոյ Փեննայի. յետ շրջելոյ և երկրպագելոյ 'ի Տնօրինական Ս. Տեղիս և գոհանալոյ զՏեառնէ վասն ազատութեան իւրոյ, մեկնեցաւ յԵրուսաղէմ՝ 1382. իսկ թագուհին Մարիամ և դուստր նորա Փեննա մնային յԵրուսաղէմ մինչ 'ի վախճան կենաց իւրեանց, և թաղեցան 'ի դուռն տաճարին Ս. Յակոբայ. Հ. Մ. Զամլեան, Հատ. Գ. Էջ 364։ Թէպէտ այժմ տեղի գերեզմանաց նոցին ծածկեալ է, բայց աւանդութեամբ ծերոց ասի լինիլ առ ընթեր սեան։ Զգերեզմանէ Փեննայի խնդիր արարին նաեւ Գաղիացիք 'ի ժամանակս մեր։ Այլ վասն Մարիամայ թագուհւոյն Հ. Ղ. Ալիշան գրէ, թէ վախճանեցաւ նա 'ի Գահիրէ, յետ աղատութեան իւրոյ 'ի բանտէ, թերեւս 'ի ցաւոց սրտին, և թաղեցաւ 'ի միում յեկեղեցեացն Հայոց։ Յուշիկ. Հատ. Բ. 517։ Սակայն աւանդութեամբ դիտեմք երկոցունց գերեզմանացն լինիլ աստ 'ի Ս. Յակոբ։

Դիցուք աստանօր զյիշատակարանս ձեռագիր մատենից։ Ներսէս Պաղոն կամ Պալենց Սսեցի՝ կրկնակնունք կրօնաւոր և Ջերմ Պապազաւան, 'ի գիրս դաւազանագրոց թագաւորացն եւ քահանայապետաց Հայոց, շարագրեալ 'ի թուին ՉԽԵ 745 (1296) պատմէ 'ի վերջաբանին և զվախճան Մարուն թագուհւոյն կնոջ Լեւոնի՝ որ հանգեաւ յԵրուսաղէմ 'ի թուին 845 (1396)։ Ցիշատակարան Ճաշոցի, յետ երկար բանից ասէ. Առին զՄիս Շամայ հեծելն 'ի թուին ՊԻԴ. 824 (1375) Ապրիլ ամիս ԺԲ. բերին զկաթուղիկոսն Կոստանդին և զԱտրի Պատրիարքն, զթագաւորն Լեւոն, Յուլիս ԺԱ։ Դարձաւ 'ի հետ ԿԹ. եւ այլք